

մա

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ  
(ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-2) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Աշխատակազմի առաջատար մասնագետը՝

**ա)** ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին,

**բ)** աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների դեմ պայքարի աշխատանքները:

**գ)** աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:

**դ)** աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է համայնքային տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:

**ե)** աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացվում է գույքահարկի և հողի հարկի գանձումը, տեղական տուրքերի և վճարումների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը.

**զ)** իրականացվում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է առնվազն միջնակարգ կրթություն:

**ա)** Պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

**բ)** տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

**գ)** համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

**ա)** գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),

**բ)** համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարմանը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակի հետ միասին, **գ)** հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում հայաստանի հանրապետության կառավարության 2005թ. Մարտի 3-ի թիվ 310-ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

**դ)** հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

**ե)** «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

**զ)** մեկ լուսանկար (3x4 չափսի),

**է)** անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Փաստաթղթերն ընդունվում են Տալվորիկի գյուղապետարանի շենքում կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչությունում,( ք. Արմավիր Խ.Աբովյանի 71) ամեն օր 9:00-ից մինչև 17:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողներն լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Տալվորիկի գյուղապետարանի աշխատակազմ,

/գ. Տալվորիկ/, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն ( ք. Արմավիր Խ.Աբովյանի 71) հեռ.՝ (0237) 2-07-70, (0237) 2-76-49:Մրցույթը կկայանա 2015թ.-ի Նոյեմբերի 16-ին ժամը 12:00 –ին Տալվորիկի գյուղապետարանում: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015թ.-ի Նոյեմբերի 1-ը: